

## ԿՐՕՆԱԿԱՆ

## ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

«Եւ էր՝ այր մի ի փարիոնցւոց անտի՝ Նիկողիմոս անուն նորա, իշխան հրէից։ Սա եկն առ նա զիշերի՝ և՝ ասէ ցնա. ռարբի՝ գիտեմք թէ յԱստուծոյ եկեալ ես վարդապետ. զի ոչ ոք կարէ զայդ նշանս առնել, զոր զուգ առնես, եթէ ոչ Աստուած իցէ ընդ նմա։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի ի վերստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւնն Աստուծոյ։ Ասէ ցնա Նիկողիմոս. զիմարդ կարէ մարդ ծնանել որ ծնեալն իցէ. միթէ՝ մարթ ինչ իցէ անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել և ծնանել։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ. ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի ի Զրոյ և ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ։ Զի ծնեալն ի մարմնոյ՝ մարմին է, և ծնեալն ի հոգւոյ՝ հոգի է։ Ի ու մի՛ զարմանար, թէ ասացի քեզ՝ պարտ է ձեզ ծնանել վերստին։ Զի հոգմ՝ ուր կամի շնչէ. և զձայն նորա լսես. այլ ոչ գիտես ուստի զայ՝ կամ յո՞ երթայ. սոյնպէս և ամենայն ծնեալն ի հոգւոյն»։ Յովն. Գ. 1—8.

Երբ Փրկիչը Գալիլիայի Կանա քաղաքի հարսանիքից վերադարձաւ Երուսաղէմ և տաճարի մէջ նստած բոլոր վաճառականներին ու հատափաճառներին դուրս քշեց եկեղեցուց, այն ժամանակ սկսեց ուսուցանել ժողովրդին եկեղեցւոյ նշանակութեան և Աստուծոյ արքայութեան մասին։ Այդ օրերից մէկում, զիշերով փարիսեցի գիտնականներից մէկը, Նիկողիմոս անունով, եկաւ Յիսուսի մօտ և նոյն խնդրի մասին հարցեր սկսեց տալ։ Յիսուսը կտրուկ կերպով պատասխանում է Նիկողիմոսին, թէ՛ մինչև որ մարդ նորից չծնուի, չի կարող մտնել երկնքի արքայութեան մէջ։ Այս պատասխանը Յիսուսի շատ է

զարմացնում Նիկողիմոսին և նորա մէջ առաջ է բերում զանազան հարցեր: Մենք ևս մեր առաջը դնենք նոյն հարցը թէ ինչպէս պէտք է մենք նորից ծնունք Աստուծոյ թագաւորութեան համար և աշխատենք լուսաբանել, որ մենք պէտք է անպատճառ նորից ծնունք և որ մենք կարճը ենք նորից ծնուել Աստուծոյ արքայութեան մէջ մանելու համար:

Կանգնած է մեր առաջ փարիսեցի Նիկողիմոսը, և այնպէս, ինչպէս որ նկարագրում է նորան աւետարանիչը, մեզ մի նոր բան է ուզում հասկացնել: «Ռաբբի, մենք գիտենք, որ դու Աստուծոյ կողմից ուղարկուած վարդապետ ես, որովհետեւ ոչ ոք չի կարող այն հրաշքները գործել, որ դու կատարում ես»... Այսպէս սկսեց խօսել փարիսեցի գիտնականը Փրկչի հետ: Նա ուզում է Փրկչին ճանաչել իբրեւ Աստուծոյ կողմից ուղարկուած վարդապետ. Փրկչի կատարած հրաշքները այդպիսի հաւատ են նորան ներշնչել: Հաւանականօրէն Նիկողիմոսը դատում է ոչ թէ այդ արտաքին հրաշքների հիման վերայ, այլ նաեւ այն կրօնական շարժման, որ Փրկչին սկսել էր, և որի մէջ Աստուծոյ մատը խառն էր: Նա աւելի լու էր գիտել այդ կրօնական շարժումն, քան ուրիշները այդտեղ մի բան, որ աշխարհային գործերից և քաղաքական յուզումներից անխառն և անշփոթ էր, Նիկողիմոսը փարիսեցիների պաշտօնական կրօնից ոչ մի բաւականութիւն չէր ստացել: Նա ներքին մի ուրիշ ցանկութիւն ունէր, կենդանի, յաւիտենական երկնային ներշնչման կարիք ունէր: Եւ երբ այստեղ վերին սրբութիւնից սկիզբն առնող մի շարժում կայ, սորա սկզբնապատճառը միթէ չպիտի կարողանար իւր օրաւ հարցերին պատասխան տալ: Միայն նա չէ ցանկանում, որ Փրկչին իմանայ իւր ուղիները, որպէս զի չխայտառակուի, այդ պատճառով էլ դիշերն է դնում Յիսուսի մօտ: Նոյն իսկ գալիլէացի Մարգարէն—Քրիստոսը չպէտք է իմանար, թէ ինքը նորան յատկապէս ինչ է ուզում ասել, այդ պատճառով Նիկողիմոսը իւր միտքը պարզ չէ արտայայտում, նա աւելի ուզում է



փորձել և Փրկչի մաքինը իմանալ, եւ այսպէս սկսում է նա, իբրեւ մի հասարակ մարդ, իւր խօսակցութիւնը Փրկչի հետ. «Մենք գիտենք, ռաբբի, որ դու Աստուծոյ կողմից ուղարկուած վարդապետ ես».

Սակայն նոյնքան բնորոշ և Նիկողիմոսի համար միանգամայն անսպասելի էր Փրկչի տուած պատասխանը նորա հարցին. Փրկիչը եկել էր աշխարհ մարդկանց աշխարհի կապանքից ազատելու և նոցա Աստուծոյ արքայութեան ժառանգ դարձնելու. եւ այժմ Փրկիչը իւր աստուածութեամբը տեսնում է թէ ինչն է դրդել Նիկողիմոսին և բերել իւր մօտ, չնայեած որ նա իւր միտքն յայտնել չէ ցանկանաւ. նա տեսնում է որ իւր առաջ կանգնած է մէկը, որ ուզում է փրկութիւն գտնել, ուստի և ամենայն լրջութեամբ իւր մարդարէական ձայնով տալիս է մի պատասխան, որը հասնում է իւր նպատակին, որին ուղղած էր նա. «Եւմարիսն եմ ասում քեզ, եթէ մէկը նորից չծնուի, չի կարող Աստուծոյ արքայութեան մէջ մտնել»:

Նիկողիմոսը եկել էր Փրկչի մօտ ներքին մի պահանջման վերայ, իսկ այժմ Փրկիչն ինքն է ուղղում նորան մի պահանջ, և զարմանք բան, հէնց այն պահանջը, որն արդէն իւր մէջ կայ, մի պահանջ, որ նա ամենաէական և ամենանշանաւոր սաղմն էր համարում ամբողջ կրօնական շարժման, մի պահանջ որ իւր մէջ էլ կենդանի արձագանք էր գտնում, թէև ինքն իրեն դեռ այդ պահանջը չէր ուղղել՝ սխալ հանապարհից վերադառնալ, նոր մարդ դառնալ, նորից ծնուել:

Եւ իսկապէս այդ պահանջը իւր մէջ պարունակում է Նիկողիմոսի ցանկացած պատասխանը. Կարծէք թէ Փրկիչը կամենում էր դորանով հասկացնել Նիկողիմոսին, թէ ես քեզ լաւ եմ ճանաչում, քո միտքն էլ եմ հասկանում, և այն ինչ որ դու ցանկանում ես, դորանով ցոյց ես տալիս, որ դու քո թշուառութեան մէջ ճանաչել ես քեզ. Դու կամենում ես Աստուծոյ թագաւորութիւնը, ես այդ լաւ գիտեմ. բայց, տես, դորանով, քո այդ ցան-



կութեամբդ մի նոր մարդ ես դու, դու այլ ես առաջուայ  
Նիկողիմոսը չես: Իսկ առանց դորան Աստուծոյ արքայու-  
թեան մէջ մտնելու համար ոչ մի ուրիշ ճանապարհ չկայ:  
Աստուած սուրբ է և չի թոյլ տալ, որ անմաքուր ձեռներ  
նորան դիպչին. միայն մաքուր հոգիները կարող են նորան  
տեսնել: Լուրջ կերպով ապաշխարելը, իւր դործած մեղ-  
քերից բոլորովին հեռանալն ու Աստուծոյ առաջ հաստա-  
տուն խօսք տալը միակ ճանապարհն է Աստուծոյ արքա-  
յութեան: Իսկ երբ կարող է մարդ արքայութեան ճանա-  
պարհը գտնել — այդ կախուած է մարդու սեպհական  
կամքից, ապաշխարելուց և իւր մեղքերը կենդանի կերպով  
ճանաչելուց: Սակայն այժմ իւրաքանչիւր մարդու մէջ մի  
հարց կարող է ծագել, «պէ՛տք է մարդ նորից ծնուի»:

Եւ իսկապէս Նիկողիմոսը Փրկչին այդպէս էլ հաս-  
կացել էր, այդ երևում է նորա պատասխանից. «Ի՛նչպէս  
կարող է մարդ նորից ծնուել, երբ ուր նա ծերացել է:  
Կարո՞ղ է նա կրկին իւր մօր որովայնը մտնել եւ նորից  
ծնուել»:

Բայց չկարծէք թէ փարիսեցի գիտնական Նիկողի-  
մոսը այնքան միամիտ էր, որ աստուածային գործերից  
տեղեկութիւն չունենար, որ նա չհասկանար թէ Փրկիչը  
դորանով յատկապէս ի՛նչ է ուզում ասել: Նորա համար  
գուցէ նոր էր այն, որ ոչ միայն մաքսաւորներն ու մեղա-  
ւորներն ու գալիւները էլ, որոնք իրենց ամենքից մաքուր  
ու ամենքից գիտուն էին համարում, — պէտք է անպառ-  
ճառ նորից ծնուին: Եւ սակայն Նիկողիմոսի մէջ էլ մի  
ձայն կայ, որ Քրիստոսի ասածին այն է պատասխանում:  
Կարող է գուցէ նորան զարմանալի թուալ, որ իւր այցե-  
լութիւնը և բարձր ատենի մէջ ունեցած պատիւը Տիրոջ  
վերայ ոչ մի ազդեցութիւն չեն անում, այնուամենայնիւ  
ներքին մի ձայն իւր հաճութիւնն է արտայայտում դորա  
հետ միասին: Նա բռնուել էր: Նորա համար ծանր էր,  
որ նա յայտնի ուսուցիչ, այժմ կանգնած է իբրեւ աշա-  
կերտ մի մարդու առաջ, մի մարդու որ ոչ մի պաշտօնա-  
կան աստիճան չունէր, նոյն իսկ այս խօսակցութիւնը, որ



իւր կողմից սիրոյ նշան էր նկատուած, աւելի շուտ նորա խոնարհութեան մէջ էր սկիզբն առնում, այնուամենայնիւ այն խայթը, որ դուրս մէջ էր, հանել չէր կարողանում։— Եւ որքան մարդիկ կան, որոնք ճշմարտութեան խօսքից վիրաւորուել կարող են։ Այդպիսիներից էր և Նիկողիժոսը, ուստի և նա ընտրուած է սովորական շփոթուած մարդկանց ճանապարհը.— նա ծաղրական ձև է ընդունում և որպէս թէ իմաստութեամբ հետեւեալ անմիտ հարցն է տալիս տիրոջը. «Ի՞նչպէս կարող է մարդ նորից ծնուել, երբ նա արդէն ծերացել է»։ Մինչդեռ իւր սիրտը հէնց իւր տուած հարցին պատասխանում է, որ մարդ իսկապէս նորից ծնուել կարող է։

Իսկ Փրկիչը թափանցելով Նիկողիժոսի հոգւոյ խորքը, տեսնում է թէ այնտեղ ինչ է կատարուում և երկաթը աւելի տաք տաք ձեծելով, մի անգամ եղած խայթը աւելի խորացնում է և իւր ասածն աւելի հաստատելու համար կրկնում. «Նոմարիսն եմ ասում քեզ, եթէ մէկը չի ծնուել ջրից եւ հոգուց, չի կարող Աստուծոյ արեւոյտիս մէջ մտնել»։

Ջրից և հոգուց—այս էլ կարող էր Նիկողիժոսը շատ լաւ հասկանալ, ինչպէս որ մենք։ Նա արդէն աչքով տեսել էր Յովհաննէսի մկրտութիւնը և հաւանականօրէն ու Գրքից այն կտորները ևս կարդացել, որոնք մկրտութեան ժամանակ կարդացուում էին։ Գուցէ և տեսել էր, թէ ինչպէս Յովհաննէսը մաքսաւորներին ու մեղաւորներին ապաշխարութեան էր կանչում, իսկ փարիսեցիներին մերժում, որովհետեւ փարիսեցիները իրենց բարձրութիւնից ու իրենց մասին ունեցած մեծ կարծիքից խոնարհել չէին ցանկանում։ Եւ այժմ Տէրն էլ նորան կրկնում է ուղղակի, «ապաշխարութեամբ կարող է միայն մարդ նորից ծնուել»։ Քո խոնարհութիւնը, քո հոգւոյ աղքատութեան ճանաչելը, քո անմաքրութիւնն Աստուծոյ առաջ,— այս բոլորի ճանաչելն է նոր մարդ դառնալու սկիզբը, Աստուծոյ արքայութեան մէջ, մտնելու առաջին քայլը,— այդ նշանակում է մաքրուել ապաշխարութեան ջրով։ Գորա



համար պահանջում է Փրկիչը լրջութիւն, հաստատուն կամք, ճանաչելը իւր մեղքի—թէ հին և թէ նոր գործած, — Փրկիչը պահանջում մկրտուել, այսինքն լուացուել ու մաքրուել բոլոր մեղքերից ապաշխարութեամբ:

Բայց Փրկիչն այստեղ աւելացնում է. «նորից ծնուել նաև հոգուց»: Ա՛խ, քանի անգամ նիկողիմոսը իւր աշակերտներին բացատրած կլինէր Յովել մարգարէի այն կտորը, ուր ասում է Աստուած, «ես կամենում եմ իմ հոգին թափել ամեն մի մարմնի վերայ», քանի՜ անգամ նա նոյն իսկ լսած կլինէր, երբ Յովհաննէսը Մեսիայի համար էր խօսում, թէ նա պէտք է հոգով ու կրակով մկրտէ ամենքին: Նոր ոյժն ու նոր կեանքը մեզ ստիպում են նոր մարդ դառնալ, Երկնքից եկած մի նոր հրամանի, մի նոր հոգու կարիք ունենք, որի ոյժով անառակը ողջախոհութեան և հպարտը խոնարհութեան մէջ զօրութիւն ստանալ կարող է: Իսկ այդպիսի ոչ մի մարդ չկայ: Մի միայն Տէրը կարող է իւր հոգով ծարաւ, քաղցած մարդու հոգուն յագուրդ տալ և նորան մկրտել: Կամենում ես իմանալ որ այդ ճիշտ է, փորձիր և կիմանաս: Կարծէք Փրկիչը կարդում է նիկողիմոսի հոգու մէջ նմանօրինակ բան, ուստի և ասում է «ինչ որ ծնուած է մարմնից—մարմին է, ինչ որ ծնուած է հոգուց—հոգի է»:

Մարմինը՝ մարմնից—ինչպէս արմատն է, այնպէս կլինի և ծառը. չար ծառը բարի պտուղ բերել չի կարող: Դու մարմին ես, ուստի և քո մէջ աստուածային պտուղ աճել չի կարող, որպէս զի սուրբ Հոգւոյ պտուղը քո մէջդ աճէ, հարկաւոր է, որ դու նորից ծնուես ջրից և հոգուց, ապաշխարութեամբ և հաւատով:

Ինչպիսի հզօր ու խիստ խօսք է՝ ուղղում Փրկիչը իրեն գիտնական համարող նիկողիմոսի նաև այսօրուան բոլոր գիտնական և հասկացող դասակարգին:—Դու մարմին ես: Կարծեմ՝ բոլորդ շատ լաւ էք հասկանում ս. գրքի միտքը: Մարմին—միս է մեր մարդկային բնութիւնը իւր մտածողութիւններով ու գործերով, իւր ցանկութիւններով ու հաճոյքներով, ինչպէս որ նա մեղքի ու մեռե-



լուծեան տակ է գտնուում: Օ՞ն, ուրեմն, թօթափենք մենք վերայից այդ բոլորը, ազնուացնենք մեր սիրտը, սրբացնենք մեր վարք ու բարքը, լցնենք մեր սիրտը սիրով, սէր՝ դէպի մեր հարեանը, բարեկամը, դէպի մեզ նման մարդը: Նայիր ինքդ քո ներսը, քո հոգուդ խորքը, այնտեղ՝ որտեղից առաջ են գալիս քո բոլոր ցանկութիւններն ու գործերը, հարցրու և քննիր քո հոգուդ մոլթ խաւարով պատած բոլոր այն ցանկութիւնների մասին, որոնք դու չես թողնում ոչ միայն քո հարեանդ տեսնէ, այլ և նոյն իսկ քո կեանքիդ միւս կէտը, քո կեանքիդ ընկերը—քո կինը տեսնէ, և այն ժամանակ խոստովանիր, որ դու մարմին ես և մարմնի բռնութեան տակ ես գլուխում: Մի կողմը քաշիր մարմնիդ կաշին, ջարդիր մեղքի գլուխը, բայց տակը կմնայ դարձեալ մարմինը: Դու ինքդ քո մարմնիդ ձեռքին կրակի մէջ ես, դու գուցէ նորա բոլոր ցանկութիւնները կատարում ես իբրև մի ծանր բեռը—որովհետև այդ բոլորի հիմքը դարձեալ մարմինն է: Դու կամենում ես ազատուել քեզանից, սակայն դու քեզ կապող շղթաները դէն ձգել չես կարողանում, դու ինքդ քեզ միևնոյն կեանք տալ չես կարողանում,—դու պէտք է նորից ծնուես:

Մենք պէտք է նորից ծնուենք, ասում է Փրկիչը Նիկողիմոսին:—Բայց, արդեօք կարո՞ղ ենք: «Կարո՞ղ է արդեօք Նեգրը իւր մարմինը փոխել և կամ Վագրը իւր կաշուի խալերը» հարցնում է մարգարէն:—Կարո՞ղ է արդեօք, մի մարդ, որ ծերացել է, որ իւր յետև ահագին պատմութիւն ունի, իւր ամբողջ կեանքը նորից ջնջել և մէկ էլ նորից սկսել:

Ի հարկ է, սիրելի ժողովուրդ, մարդկօրէն մտածելով այդ հարցին «ոչ» կպատասխանենք: Ո՞րքան հաւատ է պէտք այն բանի համար, մի աւազակ փոխուել կարող է: Բայց հաւատալ, որ այդ մեղք գործող մարդու սրտի թելերը պիտի փոխուին, որ մի սիրտ փոխանակ ինքնասիրտութեան—եղբայրական սիրով պիտի լցուի, փոխանակ վաշխառութեան—ողորմածութեամբ պիտի լցուի, փոխանակ



անարդարութեան — ճշմարտութեամբ ու արդարութեամբ  
 պիտի լցուի. որքան դժուար է հաւատալ սորան, Յատ-  
 կապէս այստեղ պէտք է տեսնել, մարդկանց մօտ, մարդ-  
 կանց կողմից այդ անկարելի է, բայց Աստուծոյ մօտ ամեն  
 բան կարելի է: Իսկ նորից ծնուելու համար, Աստուծոյ  
 կողմից ոչ մի բան հարկաւոր չէ: Եւ Փրկիչն էլ հէնց  
 դորա վերայ է մատնանիշ անում. «դու մի՛ զարմանաւ,  
 ասաց նա Նիկողիմոսին, որ ես ասացի թէ, դուք պէտք  
 է նորից ծնուէք: Քամին փչում է, ուր կամենում է, եւ  
 դու լսում ես նորա ձայնը, բայց չգիտես, նա որտեղից  
 է գալիս եւ կամ ո՞ւր է գնում, այդպէս նաեւ ամենայն  
 մի մարդ, որ հոգուց է ծնուած»:

Այո, կրկին ծնուելը մի գաղտնիք է որ մեր հինգ  
 զգայարաններից բարձր է, և այն զգալու ու տեսնելու  
 համար ուրիշ ձեռներ ու ուրիշ աչքեր են հարկաւոր, քան  
 թէ մենք ունենանք. Երկնային Բաների՝ բայց ճշմարիտ Բա-  
 ների համար է խօսում Փրկիչը: Ես քամին չեմ տես-  
 նում, ես չեմ կարող ձեռքիս մէջ բռնել և տեսլ, թէ  
 ահա քամին ձեռքիս մէջ է: Բայց ինչքան որ ճշմարիտ է,  
 որ քամին կայ, որ ես զգում եմ նորա ազդեցութիւնը  
 երեսիս վերայ, երբ նա նաւի առաւատտն է ուռցնում,  
 երբ նա տերևների մէջ է սևսւում, — նոյնքան էլ ճշմա-  
 րիտ է որ քան աստուածային հոգւոյ անտեսանելի ոյժեր,  
 որոնց միջոցով ու ազդեցութեամբը մարդկային սիրտը  
 կարող է փոխուել ու նորից ծնուել: Եւ այս վերստին  
 ծնունդը կատարուում է մարդուս սրտի խորքերում: Այն-  
 տեղ է սկսում Աստուծոյ հոգին իւր գործը, ինչպէս մեզմ  
 քամու սօսաւիւնը: Բայց յանկարծ կարող է այդ սօսա-  
 ւիւնը ուռչել և մեծանալ ու փոթորիկ դառնալ, որի ազ-  
 դեցութեան տակ սիրտը դողդողալ կսկսէ, և ամենահզօր  
 մարդն անդամ կը խոնարհուի, այդ ոյժի առաջ ու կը  
 խոստովանուի — դու ինձ համոզեցիր և ես համոզուեցի,  
 դու ինձ զօրացրիր ու ինձ յաղթեցիր: Այն, ինչ որ Նի-  
 կողիմոսին հանդիստ չէր տալիս, և գիշեր ժամանակ բե-  
 րել էր Յիսուսի մօտ, այն ինչ որ շատ անբուն գիշերներ



քո ձեռներդ իրար ե կցել և դէպի երկինք բարձրացնել ու կրկնել տուել՝ «օյ Տէր իմ, աղատիր, աղատիր, իմ հոգին», այն ինչ որ քեզ միշտ, ամեն օր, զանգի ձայնը հնչելուն պէս, քեզ տեղիցդ կանգնեցնում ու եկեղեցի է բերում, աղօթք անել ստիպում, — այդ այն մեզմ, հանգարտ սօսաւիւնն է, մարդկային սրտի մէջ Աստուծոյ հոգու հանդիստ սկսած գործն է — վերծնութիւնն է, եւ դարձեալ, այն, ինչ որ Փիլիպպոսի բանտապետի աչքերը բաց արաւ և նորան զարհուրեցնելով Պօղոս առաքեալի դռների առաջ վայր ձգեց ու ասել տուեց, «ինչ պէտք է անեմ, որ երջանիկ լինեմ», ոչ այլ ինչ էր, եթէ ոչ Աստուծոյ Հոգւոյ փոթորիկը, որ մարդկանց սրտերի մէջ է շնչում: Եթէ այսօր քո խիղճդ զարթնում է և դու քեզ հարց ես տալիս՝ «արդեօք ես նոր մարդ եմ դարձել», և երբ զղջումն սկսուում է և հաւատդ զօրեղանում և հաւատն ու զղջումն Բեզ խոստովանել են տալիս, «Հայր, ես մեղք եմ գործել քո առաջ» — ահա այդ առաջին քայլն է, որով մարդ Աստուծուց և նորա Հոգւոց ծնուած նոր կեանքի մէջ ոտք է դնում: Եւ կամ երբ քեզ մի մեծ թշուառութիւն է պատահել, մի անփոխարինելի կորուստ ես ունեցել և քո այդ վշտիդ մէջ դու զգում ես, որ այն առաջուայ մարդուց մի բան ընկել, կորել է, որ այժմ քո մէջ կայ մի բան, որ քեզ մխիթարում ու յոյս է տալիս, — ահա հէնց այդ յոյս տուողը ոչ այլ ինչ է եթէ ոչ Աստուծոյ Հոգւոյ ազդեցութիւնը:

Ճշմարիտ է, Փրկիչը չէ ասում, թէ ինչպէս պէտք է այդ վերածնութիւնը կատարուի, միայն նա ասում է — կարելի է, Շատ խորիմաստ և զարմանալի խօսքեր են, որոնց վերայ մասնանիչ է անում, «ինչպէս որ Մովսէս մարգարէն անապատի մէջ օձը բարձրացրեց, այնպէս էլ մարդու Որդին պիտի բարձրանայ այն բոլորի վերայ, որով նորան կհաւատան, ոչ թէ կորչելու՝ այլ յաւիտենական կեանք ձեռք բերելուն: Այնտեղ, ուր մեղքերի տակ ճնշուած մի հոգի Յիսուս Քրիստոսի անուամբ իւր մեղքերի համար թողութիւն է ստանում, այնտեղ սկսուում



է վերստին ծննդեամբ մի նոր կեանք։ Այդ Փրկիչն ինքն է, որ իւր Հոգւոյ զօրութեամբ մարդկանց սրտերի դռներն է բաղխում և զղջումն ու հաւատ պարգեւում, և ապա հաւատի միջոցով թողութիւն ու շնորհք տալիս հոգւով ծնուած իւր արքայութեան մէջ մտնելու։ Ուրեմն հաստատենք, որ նորից ծնուել կարելի է և որ պէտք է մենք անպատճառ ծնուենք։ Փրկչի ծննդեամբը մենք շնորհք ստացանք ու սուրբ Հոգին ընդունեցինք մասնակից լինելու երկնային այդ մեծ ուրախութեանը։ Այժմ մենք ուրիշ հարց տանք մեզ, արդեօք ծնուել ենք մենք Աստուծոյ Հոգւոց, որպէս զի դորանով յաւիտենական կեանքով ապրել կարողանանք։ Թող Աստուած ձեզ ոյժ ու կարողութիւն տայ, որ դուք ապաշխարութեամբ ու մաքրութեամբ, հաւատով ու զղջմամբ նորից ծնուել կարողանաք և իբրև նոր մարդ Աստուծոյ արքայութեան ժառանգ լինէք. ամէն։

Գեորգ. քարգ. Ա. Վ. Ս.

### Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

Ամսոյս 17-ին նորին Սրբութիւն ազգիս Վեհափառ Հայրապետը մեկնեց Երևան և հետևեալ օրն այցելեց Ն. Կայսեր. Բարձրութիւն Գեներալ Նահանգապետ Պրինց Նապօլէօնին։ Տեսակցութիւնը տևեց 1/2 ժամ, որից յետոյ Գեներալ Նահանգապետն անմիջապէս այցելութեան եկաւ նորին Սրբութեան։ Վեհափառին Երևան գնալիս ուղեկցում էին Դիւանապետ Յուսիկ վարդապետ, պ. Խորէն Խրիմեան։

Սուրբ Էջմիածին վերադարձան Երնջակի վանուց վաճառայր Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանը և Դէորդ արքեպիսկոպոս Սուրէնեանը։